ԱԼԻՄԵՆՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

4 հարցերի կարճ պատասխաններ

1 Ինչպե՞ս է որոշվում ալիմենտի չափը:

Ծնողների միջև համաձայնության **բացակայության դեպքում** ալիմենտի բռնագանձումը կատարվում է դատական կարգով՝ ամսական հետևյալ չափերով՝

ա) **մեկ երեխայի** համար ծնողների եկամտի **մեկ քառորդը,**
բ) **երկու երեխաների** համար՝ **մեկ երրորդը**,
գ) **երեք և ավելի** երեխաների համար՝ **կեսը:**



2 Ալիմենտը պարտադիր վճարվո՞ւմ է, եթե ծնողը աշխատանք չունի:

Այո, անգամ աշխատանք չունենալու դեպքում ալիմենտի պարտավորությունը մնում է: Այս դեպքում դատարանը կարող է սահմանել ֆիքսված գումար՝ հաշվի առնելով երկրում միջին աշխատավարձը:

3 Ինչպե՞ս ներկայացնել ալիմենտի պահանջ:

Եթե բացակայում է ծնողների համաձայնությունը, պետք է դիմել դատարան: Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) երեխայի ծննդյան վկայական,
բ) ամուսնության/ամուսնալուծության վկայական,
գ) երեխայի խնամքի ծախսերի մասին հիմնավորող փաստաթղթեր:

4 Ի՞նչ պատասխանատվություն է նախատեսված ալիմենտ չվճարելու դեպքում

Ալիմենտի չվճարման դեպքում կիրառվում են հետևյալ միջոցները՝

ա) Վարչական տուգանքներ,
բ) Գույքի բռնագանձում,
գ) Քրեական պատասխանատվություն: